# Արձանագրություն թիվ 1

2012թ հունվարի 24–ին ժամը 12-ին տեղի ունեցավ Ձորավանք համայնքի ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցում էին համայնքի 49 բնակիչ և մարզպետարանի ներկա-յացուցիչ Ռ. Հովհաննիսյանը
Նախագահությամբ համայնքի ավագանու անդամ՝ Հ. Բալյանի
Քարտուղարությամբ աշխատակազմի քարտուղար՝ Ն. Բալյանի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2011թ. ընթացքում համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն

/ Զեկուցող համայնքի ղեկավար Ն. Խալաթյան/

2. 2012թ. նախատեսվող աշխատանքների ներկայացում

/ Զեկուցող համայնքի ղեկավար Ն. Խալաթյան /

1. Լսեցին - Ձորավանք համանքի ղեկավար Ն. Խալաթյանի զեկուցումը 2011թ. ընթացքում համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների մասին:
Հաշվետվությունը կցվում է:

2. Լսեցին - Ձորավանք համանքի ղեկավար Ն. Խալաթյանի զեկուցումը 2012թ. նախատեսվող աշխատանքների մասին

Հաշվետվությանը կից ներկայացվում է նախատեսվող ծրագրերի մասին ամփոփ տեղեկատվություն

Ձորավանք համայնքի ընդհանուր ժողովը որոշեց.

1. Համայնքի ղեկավար Ն. Խալաթյանի կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Նախագահ՝ Հ. Բալյան

Քարտուղար՝ Ն. Բալյան

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

2011թ ՁՈՐԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ

Տեղի ունեցավ հմայնքի նստ հմայնքի ղեկավարի տարեկան հաշվետվության վերաբերյալ: Համայնքի 230 բնակիչներից նիստին մասնակցում էին 49 բնակիչ:
Նիստը նախագաահում էր ավագանու անդամ Հ. Բալյանը
Քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Ն. Բալյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

3. 2011թ. կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն
4. 2012թ. նախատեսվող ծրագրերի ներկայացում

1. Համանքի ղեկավար Ն. Խալաթյանը համայնքի բնակչությանը ներկայացրեց նախ համայնքի բյուջեի մասին ամփոփ հաշվետվություն, որի արդյունքում պարզ դարձավ, որ համայնքի 2011թ. բյուջեն կատարված է սեփական եկամուտների մասով՝ 100.0 % :

Այնուհետև ներկայացվեց համայնքում կատարված աշխատանքները: Տարբեր ՀԿ – ների կողմից կատարվել են աշխատանքներ, հիմնականում սեմինարների և նյութական օգնության տեսքով:
Սեմինարների տեսքով կայացել է գյուղատնտեսական խորհրդատվություն, Կայացել է համակարգչային, դիզայներական և կար ու ձևի դասընթացներ, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են 34 ուսուցանվողներ:
Աշխատանքներ է կատարվել խմելու ջրագծի կապտաժների վրա:
« Իրական նվեր » Չեխական կազմակերպության կողմից համայնքի 7 ընտանիք ստացել են 3/ երեք / կով, 9 / ինը / այծ, 10 / տաս/ ոչխար:
Տարրական դասարանի 9 /ինը / աշակերտներ ստացել են դպրոցական համազգեստ:
Համայնքի բազմազավակ 4 /չորս/ ընտանիքներ ստացել են օգնություն՝ հագուստի տեսքով:
Համայնքի միջոցներով կատարվել է ներհամայնքային ճանապարհների փոսային որոշակի աշխատանքներ:

2. Համանքի ղեկավար Ն. Խալաթյանը համայնքի բնակչությանը ներկայացրեց 2012թ. նախատեսվող ծրագրերի ամփոփ պատկերը: Նախատեսվում է ներհամայնքային ճանապարհների և խմելու ջրագծի ներքին և արտաքին ցանցի վերանորոգում: Նախատեսվում է նաև գյուղապետարանի շենքի վերանորոգում, որի մեջ ներառվելու է նաև գրադարանի վերանորոգում:

Ժողովի մասնակիցների կողմից համայնքի ղեկավարի հաշվետվությունը գնահատվեց դրական:

Նախագահ՝ Հ. Բալյան

Քարտուղար՝ Ն. Բալյան

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջորավանք համայնքի ղեկավարի 2011 թ.կատարած աշխատանքների վերաբերյալ

1. Համայնքի 2011թ. բյուջեն կատարված է սեփական եկամուտների մասով՝ 100.0% :

| | |
|---|---|
| 1. Հարկեր և տուրքեր՝ այդ թվում | 362.0 հազ. դրամ |
| 1.1. Հողի հարկ | 307.0 հազ. դրամ |
| 1.2. Գույքահարկ | 25.0 հազ. դրամ |
| 1.3. Տեղական տուրք | 30.0 հազ. դրամ |
| 2. Համահարթեցման դոտացիա | 3520.0 հազ. դրամ |
| 3. Այլ եկամուտմեր՝ այդ թվում | 663.2 հազ. դրամ |
| 3.1. Գույքի վարձավճար | 363.2 հազ. դրամ |
| 3.2. Պատվիրակված լիազորություններ | 300.0 հազ. դրամ |
| Ընդամենը եկամուտներ՝ | 4545.2 հազ. դրամ |
| Տարեկան նախատեսված՝ | 4815.0 հազ. դրամ |

2. Համայնքում կատարվաել են տարբեր ՀԿ – ների կողմից աշխատանքներ՝ հիմնա-կանում սեմինարների և նյութական օգնության տեսքով:

Սեմինարների տեսքով կայացել է գյուղատնտեսական խորհրդատվություն՝ ՇԵՆ ԲՀԿ ի կողմից: Սեմինարին մասնակցել են 12 բնակիչ՝ անհատական խորհրդատվությամբ:

Կայացել է համակարգչային, դիզայներական և կար ու ձևի դասընթացներ, որոնց մասնակցել են .

- համակարգչային դասընթացներ 13 ուսուցանվող
- դիզայներական դասընթացներ 9 ուսուցանվող
- կար ու ձևի դասընթացներ 12 ուսուցանվող

Նյութական և դրամական տարբեր օգնություններ են կատարվել համայնքի բյուջեի և տարբեր ՀԿ – ների կողմից:

Աշխատանքներ է կատարվել խմելու ջրագծի կապտաժների վրա:

« Իրական նվեր » Չեխական կազմակերպության կողմից համայնքի 7 ընտանիք ստացել են 3/ երեք / կով, 9 / ինը / այծ, 10 / տաս/ ոչխար:

Տարրական դասարանի 9 /ինը / աշակերտներ ստացել են դպրոցական համազգեստ:

Համայնքի բազմազավակ 4 /չորս/ ընտանիքներ ստացել են օգնություն՝ հագուստի տեսքով:

Համայնքի միջոցներով կատարվել է ներհամայնքային ճանապարհների փոսային որոշակի աշխատանքներ:

Համայնքում կան հիմնախնդիրներ որոնցից առաջնայիններն են.

- Գետիկ գետի վրայի կամրջի անմխիթար վիճակ. կա վտանգ կամրջի փլուզման համար, որը կբերի Ջորավանք և Անտառամեջ համայնքների մեկուսացմանը
- Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ
- Խմելու ջրագծի ներքին և արտաքին ցանցի անբարեկարգ վիճակ
- Գազաֆիկացման բացակայություն
- Համայնքի 50 աշակերտի համար նախատեսված տարրական դպրոցի անբարեկարգ վիճակ

3. 2012թ. նախատեսվող ծրագրերի ամփոփ պատկերը:

- Նախատեսվում է ներհամայնքային 2 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհների վերանորոգում:

- Խմելու ջրագծի ներքին և արտաքին ցանցի վերանորոգում: Արտաքին ցանցի ընդհանուր երկարությունը 1500մ, ներքին ցանցինը՝ 1000մ: Նախատեսվում է նաև թվով 1 նոր կապտաժի կառուցում:
- Նախատեսվում է գյուղապետարանի շենքի վերանորոգում, որի մեջ ներառվելու է նաև գրադարանի վերանորոգումը:

Ջորավանք համայնքի ղեկավար՝ Ն. Խալաթյան